## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

**ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 03.02.2022թ. N 84/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.02.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Կոսիկյանը, Լ.Նալբանդյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Օրակարգ</u>

<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ռ.Գրիգորյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Դանիամ» ՍՊԸ (ք.Երևան, Նար Դոսի-73, բն-36)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «Դանիամ» ՍՊԸ | ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ | 198 000 000 | 20% | 237 600 000 | 240 000 000 |

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում;
-Առաջին տեղը զբաղեցրած «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան, սակայն «Դանիամ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հրավերով նախատեսված հայտի ապահովումը:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Դանիամ» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-Նիստը վերսկսել՝ 2022 թվականի փետրվարի 28-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյան

Անդամներ՝ Ռ.Կուսիկյան

Լ.Նալբանդյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան